ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԻՐԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ԱՆՁԻ ԵՍ-ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 25-33 ՏԱՐԵԿԱՆԻ ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԹ.00.01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ԵՐԵՎԱՆ - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝	հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մելսիկ Պարգևի Մկրտումյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Նաիրա Ռաֆիկի Հակոբյան** հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սվետլանա Ֆրունզեի Հարությունյան**
Առաջատար կազմակերպություն՝	**Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թ. փետրվարի 25-ին ժամը 12-ին Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գրադարանում:
Սեղմագիրն առաքվել է 2026 թ. հունվարի 23-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Կամո Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը - Գիտական հոգեբանության մեջ 25-33 տարիքային ճգնաժամի հիմնախնդիրը բավական ուշ է արժանացել ուշադրության և առանձնացվել որպես ճգնաժամ՝ չնայած որ կարևորվել է հոգեբանական, հոգեբուժական տեսանկյունից՝ որպես շրջադարձային և ախտաբանության առաջացման առումով խոցելի շրջան: Այս ճգնաժամի հետազոտությունները քիչ են, շատերը տեսական-վերլուծական բնույթ են կրում, էմպիրիկ հետազոտությունները փոքրաթիվ են: Կարևոր է նաև Ես-կոնցեպցիայի հիմնահարցը, որը շատ է հետազոտվել, սակայն մինչ օրս մեծ հակասականություն կա այդ հասկացության, դրա բաղադրիչների, առնչակից՝ Ես, ինքնագնահատական, ինքնավերաբերմունք հասկացությունների տարանջատման հարցում: Ըստ մի շարք հետազոտությունների, (Լ. Բոժովիչ, Ե. Սոլդատովա, Ս. Խուդոյան և ևն), ճգնաժամերի ընթացքում հենց Ես-կոնցեպցիայում են տեղի ունենում խմորումներ, սակայն թե այս ճգնաժամի ընթացքում կոնկրետ ինչ է տեղի ունենում դրա տարբեր բաղադրիչներում, գրեթե հետազոտված չէ: Նշվածներով պայմանավորված՝ հետազոտությունն արդիական է ոչ միայն տեսական, այլև կիրառական առումով. հնարավորություն է տալիս ավելի հստակ պատկերացում կազմել այս ճգնաժամի ընթացքում անձի Ես-կոնցեպցիայի էական, առանցքային գծերի մասին, ինչը շատ կարևոր է հոգեբանական միջամտությունը՝ հոգեբանական խորհրդատվությունը, հոգեթերապիան ճիշտ և արդյունավետ կազմակերպելու հարցում:

Հետազոտության օբյեկտը – ճգնաժամ ապրող անձի Ես-կոնցեպցիան է:

Հետազոտությանն առարկան – 25-33 տարեկանի ճգնաժամի ընթացքում անձի Ես-կոնցեպցիայի առանձնահատկություններն են:

Հետազոտության նպատակը – 25-33 տարեկանի ճգնաժամի ընթացքում անձի Ես-կոնցեպցիայի դրսևորման առանձնահատկությունների ուսումնասիրությունն է:

Առաջ են քաշվել հետազոտության հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել հոգեբանական մասնագիտական գրականության մեջ անձի ճգնաժամերին և մասնավորապես 25-33 տարեկանի զարգացման ճգնաժամին, անձի Ես-կոնցեպցիային, դրա կառուցվածքին, բաղադրիչներին, ինչպես նաև ճգնաժամերի ընթացքում դրա առանձնահատկություններին առնչվող տեսությունները, գիտական մոտեցումներն ու հայեցակարգերը, կատարել վերջիններիս համապարփակ վերլուծություն և համակարգում, առկա խնդիրների վերհանում:

2. Վերհանել 25-33 տարեկանի զարգացման ճգնաժամի դրսևորումները, ընթացքի առանձնահատկությունները, սրությունը, դրա հիման վրա խմբավորել հետազոտվողներին ըստ ճգնաժամի փուլերի կամ ընթացքի առանձնահատկությունների:

3. Փորձարարական հետազոտությամբ վերհանել 25-33 տարեկանի զարգացման ճգնաժամի տարբեր ենթափուլերի կամ ընթացքի տարբեր առանձնահատկություններով հետազոտվողների Ես-կոնցեպցիայի բաղադրիչների ընդհանուր առանձնահատկությունները:

4. Փորձարարական հետազոտությունների արդյունքների քանակական, որակական և համեմատական վերլուծության հիման վրա պարզել, թե ինչպիսի դրսևորումներ ունեն 25-33 տարեկանի զարգացման ճգնաժամի թույլ դրսևորումներով կամ նախաճգնաժամային, սուր դրսևորումներով կամ բուն ճգնաժամի և հետճգնաժամային ենթափուլերի հետազոտվողների Ես-կոնցեպցիայի բաղադրիչները:

5. Ես-կոնցեպցիայի տեսական և փորձարարական հետազոտությունների հիման վրա ձևավորել Ես-կոնցեպցիայի կառուցվածքի ամբողջական, համակարգային նոր մոդել:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ Անձի Ես-կոնցեպցիայի բաղադրիչների միջև գործում է դինամիկ հիերարխիա. ինչպես կյանքի տարբեր փուլերում, ճգնաժամի տարբեր փուլերում դրանց դոմինանտության չափանիշները փոխվում են, մեկը սկսում է կատարել ընդհանուր Ես-կոնցեպցիայի **«Լոկոմոտիվի»**՝ ուղղորդող, շարժիչ ուժի, կենտրոնի ֆունկցիան, իսկ 25-33 տարեկանի ճգնաժամի ընթացքում Ես-Կոնցեպցիայի Ծնողական, Մասնագիտական/Ակադեմիական, Ամուսնու/Կնոջ, Ընտանեկան և այլն բաղադրիչներն են ստանձնում Ես-Կոնցեպցիայի լոկոմոտիվի դերը, ինչի արդյունքում մասնավորապես դրսևորվում է.

- Նախաճգնաժամային ենթափուլում Ֆիզիկական Ես, Բարոյական Ես բաղադրիչները դեռ ակտուալ են և ուղղորդում են ընդհանուր Ես-կոնցեպցիան, և դրանց դրական կամ բացասական բնույթն ազդում է Ես-կոնցեպցիայի կոգնիտիվ և հուզական գնահատողական բաղադրիչների /ինքնահարգանք, ինքնագնահատական/ դրական կամ բացասական երանգավորման վրա:
- Բուն ճգնաժամի ենթափուլում Ես-կոնցեպցիայի նոր ակտուալացած բաղադրիչների իդեալական և իրական կողմերի միջև, ինչպես նաև Ներկա, Անցյալ և Ապագա Ես-երի միջև բախումները, խորը հակասություններն ու կոնֆլիկտը հանգեցնում են ճգնաժամային ապրումների ու ճգնաժամի ախտանշանների վառ, սուր դրսևորումների, Ես-կոնցեպցիայի կոգնիտիվ և հուզական գնահատողական բաղադրիչների բացասական դրսևորումների, Ներկա Ես-ի բացասական ընկալումների:
- Հետճգնաժամային ենթափուլում Ես-ի որոշ բաղադրիչների /Մասնագիտական, Ծնողական, Ամուսնու/Կնոջ, Ներկա, Անցյալ և Ապագա Ես-եր/ իդեալական և իրական կողմերը բավական մոտենում են, հաղթահարվում խորը հակասությունները, բախումները:

Հետազոտության մեթոդոլոգիական և տեսական հիմքերը: Հետազոտությունը կառուցվել է զարգացման, դետերմինիզմի, պատմականության, համակարգայնության մեթոդոլոգիական սկզբունքների վրա: **Հետազոտության տեսական հիմքն** են Լ.Ս. Վիգոտսկու, Բ.

Լիվեհուդի, Դ. Լևինսոնի անձի զարգացման և ճգնաժամերի տեսությունները, Ե.Լ. Սոլդատովայի, Լ.Ի. Բոժովիչի հիմնադրույթները, ինչպես նաև Ու. Ջեյմսի, Զ.Հ. Կուլիի, Մ. Ռոզենբերգի, Հ.Ս. Սալիվանի, Կ. Ռոջերսի, Ռ.Դ. Լենգի, Դ.Վ. Վիննիկոտի, Դ. Սյուփերի տեսությունները, Վ.Ս. Մուխինայի, Վ.Վ. Ստոլինի, Ու.Հ. Ֆիթսի, Վ.Ն. Ուորենի և այլոց մեթոդաբանական մոտեցումները: Մեր հետազոտության առանցքային տեսական հիմքերից է նաև Ս.Ս. Խուդոյանի՝ ճգնաժամերի պատճառների և դրանց դասակարգման տեսությունը:

Հետազոտության մեթոդները և մեթոդիկաները: Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդներն ու մեթոդիկաները. թեստավորում՝ Ինքնահարգանքի (Մ. Ռոզենբերգ), Ինքնագնահատականի էքսպրես/վերբալ ախտորոշման (Ն.Պ. Ֆետիսկին, Վ.Վ. Կոզլով, Գ.Մ. Մանոյլով), Ընդհանուր ինքնագնահատականի (Գ.Ն. Կազանցեվա), Թեննեսիի Ես-կոնցեպցիայի ուսումնասիրության (Ու. Հ.Ֆիթս, Վ. Ն.Ուորեն) մեթոդիկաները, «Անձի Ես-կոնցեպցիայի բաղադրիչների ուսումնասիրության», «25-33 տարեկանի ճգնաժամի ենթափուլերի և արտահայտվածության աստիճանի ուսումնասիրության» հեղինակային հարցարանները, Անձի Ես-երի վիզուալիզացիայի գիտափորձ, Դեպքերի վերլուծություն, Զրույց:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հուսալիությունն ապահովվել է հիմնախնդրի մեթոդոլոգիական և տեսական հիմքերի մանրազնին մշակմամբ, տեսական բավարար հիմքերի ստեղծմամբ, մեթոդոլոգիական սկզբունքների, հետազոտության նպատակին և էմպիրիկ խնդիրներին համապատասխան մեթոդների ընտրությամբ, դրանց բազմազանությամբ, մեծ քանակությամբ հետազոտվողների ընդգրկմամբ, հետազոտության արդյունքների քանակական և որակական վերլուծությամբ:

Հետազոտության գիտական նորույթը: ►Հետազոտության մեջ առաջ է քաշվել Ես-կոնցեպցիայի կառուցվածքի բաղադրիչների դինամիկ հիերարխիայի գաղափարը, որի հիման վրա՝ նոր հասկացություն՝ Ես-կոնցեպցիայի **«Լոկոմոտիվային բաղադրիչը»** (Ես-կոնցեպցիայի վրա գերուժեղ, ուղղորդող, իր դրական կամ բացասական բնույթով Ես-Կոնցեպցիայի հուզական-վերաբերմունքային բաղադրիչի /ինքնագնահատական, ինքնավերաբերմունք/ վրա ազդեցություն թողնող բաղադրիչը): ►25-33 տարեկանի ճգնաժամի ընթացքում Անձի Ես-կոնցեպցիայի նախկինում ակտուալ, կարևոր և առանցքային նշանակություն ունեցող Իդեալական Ես-ի բաղադրիչը դեզակտուալանում է, ակտուալանում են Ես-ի՝ այս տարիքի համար առավել կարևոր բնութագրեր ունեցող բաղադրիչները՝ Ծնողական, Մասնագիտական/ Ակադեմիական, Ամուսնու/Կնոջ, Ընտանեկան և այլն, որոնք սկսում են կատարել զգայուն դարձած Ես-կոնցեպցիայի «Լոկոմոտիվային բաղադրիչի»՝ ուղղորդող, շարժող հիմնական կենտրոնի դերը: ►Սեփական Ես-ի մասին ընկալումների ծագման հիմքով տարանջատվում և առաջարկվում է նոր հասկացություն՝ **«Ներհայեցողական Ես-ը» (**ի հակադրություն՝ **«Հայելային Ես»** հասկացության**):** ►Նախաճգնաժամային ենթափուլում դեռ լոկոմոտիվային դեր ունեն Ես-կոնցեպցիայի Ֆիզիկական, Բարոյական Ես-երը և դրանց

դրական կամ բացասական բնույթը տարածվում, ազդում է Ես-կոնցեպցիայի կոգնիտիվ և հուզական բաղադրիչների վրա: ►Բուն ճգնաժամի փուլում Ես-կոնցեպցիայի նոր ակտուալացած՝ լոկոմոտիվային բաղադրիչների, նաև Ներկա, Անցյալ և Ապագա Ես-երի, միջև, հատկապես Ներկա Ես-ի Իդեալական և Իրական կողմերի, միջև բախումն է հենց հանգեցնում ճգնաժամային ապրումների ու ճգնաժամի սրացման, Ես-կոնցեպցիայի կոգնիտիվ և հուզական գնահատողական բաղադրիչների /ինքնահարգանք, ինքնագնահա–տական/ բացասական, գերբացասական բնույթի: ►Բուն ճգնաժամի փուլում հաճախ Ներկա Ես-ը՝ բացասական, Ապագա Եսը հոռետեսական բնույթ են կրում, ինչի արդյունքում հնարավոր են Ներկա Ես-ի անորոշության, իրական գծերի արտամղման դեպքեր, որը դրսևորվում է նույնիսկ վիզուալիզացնելու խնդիրներով: ►Ճգնաժամի ընթացքում նվազում է Հայելային Ես-ի նշանակությունը, ավելի կարևորվում է Ներհայեցողականը: ►Հետճգնաժա–մային ենթափուլում, Մասնագիտական, Ծնողական, Ամուսնու/Կնոջ Ես-երի իդեալական և իրական կողմերը բավական մոտ են, խորը հակասություն, բախում չկա: Ներկա, անցյալ և ապագա Ես-երի կոգնիտիվ հատվածն ավելի իրատեսական է, Ներկա Ես-ը բավական կոնկրետ, հստակ, հուզական վերաբերմունքը՝ դրական, առկա է միտում Ես-Կոնցեպցիայի Ներկա հատվածն ընդունելու: ►Ներկայացվել է Ես-կոնցեպցիայի կառուցվածքի և բաղադրամասերի ամբողջական, ընդգրկուն և համակարգային բնույթ կրող նոր մոդել:

Հետազոտության տեսական նշանակությունը: Հետազոտությունը հարստացնում է անձի զարգացման, Ես-կոնցեպցիայի, 25-33 տարիքային շրջանի, այս տարիքի ճգնաժամի բնույթին, դրա դրսևորման առանձնահատկությունների մասին պատկերացումները՝ ցույց տալով ընդհանրապես Ես-կոնցեպցիայի, ինչպես նաև դրա բաղադրիչների առանձնա-հատկությունները անձի զարգացման այս կարևոր, առանցքային, շրջադարձային փուլում:

Հետազոտության կիրառական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել անձի, տարիքային, զարգացման հոգեբանության, ակմեաբանության և զարգացման ճգնաժամերի դասընթացներում, ինչպես նաև 25-33 տարիքային շրջանի, անձի Ես-կոնցեպցիայի հիմնախնդիրների հետ կապված հոգեբանական խորհրդատվությանը, հոգեթերապիային, անձնային աճին առնչվող խնդիրների կարգավորման ոլորտներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները

1. 25-33 տարեկանի ճգնաժամը դրսևորվում է տարբեր սրության ախտանշաններով, որոնց հիման վրա կարելի է առանձնացնել ճգնաժամի դրսևորման Նախաճգնաժամային կամ թույլ, թեթև դրսևորումներով, Բուն ճգնաժամի կամ ճգնաժամի սուր դրսևորումներով և Հետճգնաժամային ենթափուլեր:

2. Անձի Ես-կոնցեպցիայի բաղադրիչների միջև գործում է դինամիկ հիերարխիա. կյանքի տարբեր փուլերում դրանց դոմինանտության չափանիշները փոխվում են, դրանցից մեկը

սկսում է կատարել Ես-կոնցեպցիայի «Լոկոմոտիվի»՝ ուղղորդող, շարժիչ ուժի, կենտրոնի ֆունկցիան: 25-33 տարեկանի ճգնաժամի ընթացքում Ես-կոնցեպցիայում տեղի ունեցող տեղաշարժերի արդյունքում նախկինում ակտուալ, կարևոր և առանցքային նշանակություն ունեցող Իդեալական Ես-ի բաղադրիչը դեզակտուալանում է, ակտուալանում և ընդհանուր Ես-կոնցեպցիայի լոկոմոտիվի՝ ուղղորդող, շարժող հիմնական կենտրոնի դեր են ստանձնում Սոցիալական ակտիվության սուբյեկտի Ես-ի այս տարիքի համար առավել կարևոր բնութագրեր ունեցող բաղադրիչները՝ Ծնողական, Մասնագիտական/Ակադեմիական, Ամուսնու/Կնոջ, Ընտանեկան: Ճգնաժամի երեք ենթափուլերում կամ թույլից մինչև վառ արտահայտված սրության դեպքերում անձի Ես-կոնցեպցիան զգայուն է դառնում:

3. Նախաճգնաժամային ենթափուլում Ընտանեկան Ես և Սոցիալական Ես բաղադրիչները դեռ ակտուալ չեն. ակտուալ են Ես-կոնցեպցիայի Ֆիզիկական Ես, Բարոյական Ես բաղադրիչները, որոնց դրական կամ բացասական բնույթը տարածվում, ազդում է Ես-կոնցեպցիայի կոգնիտիվ և հուզական գնահատողական բաղադրիչների /ինքնահարգանք, ինքնագնահատական/ դրական կամ բացասական երանգավորման վրա:

4. Բուն ճգնաժամի ենթափուլում կամ ճգնաժամի սուր և միջին սրության դեպքում Ես-կոնցեպցիայի նոր ակտուալացած՝ լոկոմոտիվային բաղադրիչների Իդեալական և Իրական կողմերի միջև բախումն է հենց հանգեցնում ճգնաժամային ապրումների ու ճգնաժամի ախտանշանների վառ, սուր դրսևորումների: Ես-կոնցեպցիայի դեզակտուալացած բաղադրիչները /Ֆիզիկական Ես/ այլևս չեն ազդում Ես-կոնցեպցիայի վրա, նոր ակտուալացած բաղադրիչների Իդեալական և Իրական կողմերի միջև բախումն է հանգեցնում Ես-կոնցեպցիայի կոգնիտիվ և հուզական գնահատողական բաղադրիչների /ինքնահարգանք, ինքնագնահատական/ բացասական, երբեմն՝ գերբացասական բնույթով /գերցածր ինքնահարգանք, ինքնագնահատական, ինքնանվաստացման դրսևորումներ և այլն/:

5. Բուն ճգնաժամի ենթափուլում Ներկա, Անցյալ և Ապագա Ես-երի, միջև, հատկապես Ներկա Ես-ի Իդեալական և Իրական բաղադրիչների միջև խորը հակասությունն ու կոնֆլիկտն են բուն ճգնաժամի ենթափուլում հանգեցնում ժամանակի ընթացքի արագացման սուբյեկտիվ ընկալման, Ներկա Ես-ի բացասական ընկալումների, հնարավոր են նույնիսկ Ներկա Ես-ի իրական գծերի արտամղման դեպքեր, որը դրսևորվում է նույնիսկ սեփական Ես-ը վիզուալիզացնելու խնդիրներով: Ըստ էության, այս երևույթը կարող է բնորոշ լինել ոչ միայն 25-33 տարեկանի, այլ ընդհանրապես անձի ճգնաժամային ապրումների հոգեվիճակին: Ճգնաժամի ընթացքում նվազում է Հայելային Ես-ի նշանակությունը, ավելի մեծ կարևորություն է ստանում Ներհայեցողական Ես-ը:

6. Հետճգնաժամային ենթափուլում, ի տարբերություն Բուն ճգնաժամի փուլի, Մասնագիտական, Ծնողական Ես Ամուսնու/Կնոջ Ես-երի իդեալական և իրական կողմերը բավական մոտ են իրար, խորը հակասություն և բախում չկա: Ներկա, անցյալ և ապագա Ես-

երի կոգնիտիվ հատվածն ավելի իրատեսական է. տարբեր են հատկապես Ներկա Ես-ի բնութագրումները, որ բավական կոնկրետ, հստակ են, հուզական-գնահատողական վերաբերմունքը՝ դրական, առկա է միտում Ես-Կոնցեպցիայի Ներկա հատվածն ընդունելու:

7. Անձի Ես-կոնցեպցիան ամբողջական, դինամիկ համակարգ է՝ փոխկապակցված մեկը մյուսից ծագող, միմյանց վրա ազդող բաղադրիչներով, իսկ վերջիններս կարելի է ներկայացնել դասակարգված տարբեր բաժանման հիմքերով (ըստ իրականության հետ կապի, ըստ այս կամ այն ոլորտին առնչության և պատմամշակութային ազդեցության, ըստ ծագման աղբյուրի, ըստ ժամանակային գծի վրա տեղակայման, ըստ գոյության ցանկալիության, ըստ նույնականության առկայության կամ բացակայության, ըստ բաղադրիչների կոգնիտիվ կամ հուզական բնույթի և այլն):

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել և քննարկվել են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Կիրառական հոգեբանության ամբիոնի նիստերին, անցկացված սեմինարների, ինչպես նաև մի շարք հանրապետական և միջազգային գիտաժողովների ընթացքում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (174 անուն) և հավելվածից, 170 էջ ծավալով: Պարունակում է 1 աղյուսակ, 8 սխեմա, 18 դիագրամ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում ներկայացվել են թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, պաշտպանության առաջարկվող վարկածը, դրա տեսական ու մեթոդոլոգիական հիմքերը, հետազոտության մեթոդներն ու մեթոդիկաները, արդյունքների հավաստիությունը, հուսալիությունն ապահովող հիմքերը, գիտական նորույթը, տեսական ու կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները և դրանց փորձաքննությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Անձի Ես-կոնցեպցիայի և դրա կառուցվածքի հիմնախնդիրը»** գլուխը 4 ենթագլուխներ ունի: I ենթագլխում ներկայացվել են «Ես-կոնցեպցիա հասկացությունը, Ես-կոնցեպցիայի հիմնախնդիրը հոգեբանության մեջ», դրան առնչվող ընդհանուր տեսություններն ու էությունը վերհանող մոտեցումները (Ու. Ջեյմս, Չ.Հ. Կուլի, Ջ. Միդ և այլ): II ենթագլխում ներկայացվում է «Ես-կոնցեպցիա հասկացության կառուցվածքը որպես գիտական ուսումնասիրության խնդիր», դրա վերաբերյալ տարբեր հեղինակների մոտեցումները, հակասությունները: «Ես-կոնցեպցիայի բաղադրիչները» ենթագլխում ներկայացվում են տարբեր հեղինակների կողմից ընդունված Ես-ի մասերը /ֆիզիկական, հոգեբանական, հայելային, կեղծ, վիրտուալ, էթնիկական, մասնագիտական, ծնողական, սեռային ևն/: 4-րդ ենթագլխում ներկայացվում են «Ես կոնցեպցիայի կոգնիտիվ և հուզական բնույթ

կրող բաղադրիչները», /ինքնագնահատական, ինքնավերաբերմունք, ինքնահարգանք, Ես-ի զգացողության առկայություն կամ բացակայություն ևն/, դրանց առնչվող մոտեցումները:

Ատենախոսության 2-րդ՝ **«Զարգացման ճգնաժամեր, 25-33 տարեկանի ճգնաժամի հիմնախնդիրը հոգեբանության մեջ»** գլուխը 3 ենթագլուխ ունի: 1-ին՝ «Զարգացման ճգնա–ժամերի ընդհանուր տեսությունները» ենթագլուխն անդրադարձ է ճգնաժամերի էության, էթիոլոգիայի, տեսակների վերաբերյալ տարբեր հեղինակների տեսակետերին: «25-33 տարեկանի ճգնաժամի վերաբերյալ տեսությունները և մոտեցումները» ենթագլուխն անդրա–դարձ է այս ճգնաժամի տեսություններին, իսկ III ենթագլխում «25-33 տարեկանի էմպիրիկ հետազոտությունները», դրանց բացերը, դեռ առկա հարցերն են ներկայացված:

Երրորդ՝ **«25-33 տարիքային շրջանի ճգնաժամի ընթացքում անձի ես-կոնցեպցիայի առանձնահատկությունների փորձարարական հետազոտություն»** խորագրով գլուխը 8 ենթագլուխներ ունի: 1-ին ենթագլխում մանրակրկիտ ներկայացված են «Փորձարարական հետազոտության կազմակերպումը, ընթացքը, ընտրակազմը և մեթոդները»:

Հետազոտության փուլերը: Հետազոտությունն անցկացվել է 2011-2025թ.թ. ընթացքում 3 փուլով: I փուլում իրականացվել է թեմային առնչվող հոգեբանական գրականության վերլուծություն, պիլոտային հետազոտություն՝ մեթոդիկաների, նախնական վարկածների, խնդիրների ստուգման, ճշգրտման համար: II փուլում համակարգվել է մեթոդական համակարգը, իրականացվել են հետազոտություններ, իսկ III-ում՝ հետազոտության արդյունքների վերլուծություն, դրանց հոգեբանական մեկնաբանում և ամփոփում:

Հետազոտության ընտրակազմը: 2011-2025թ.թ. ընթացքում հետազոտությանը մաս-նակցած բազմաթիվ անձանցից ընտրակազմում ընդգրկվել են 25-33 տարեկանի ճգնաժամի տարբեր ենթափուլերում գտնվող 150 անձինք, գիտափորձի դեպքում ՝ նաև 18-23 և 37-50 տարեկանների ստուգիչ խումբ: Կազմում եղել են տարբեր դպրոցների, քոլեջների աշակերտ-ների ծնողներ, խորհրդատվության դիմած այցելուներ, ՀՀ տարբեր բուհերի ուսանողներ, բանկերի և այլ հաստատությունների աշխատակիցներ: «25-33 տարեկանի ճգնաժամի ենթափուլերի և արտահայտվածության աստիճանի ուսումնասիրության հարցարանի» հիման վրա առանձնացվել են ճգնաժամի պայմանական ենթափուլեր, հետազոտվողների 3 խմբեր. Բուն ճգնաժամի կամ ճգնաժամի սուր կամ միջին ընթացքով ենթափուլ՝ 52 անձ (ընտրանքի 150-ից 35%-ը), Հետճգնաժամային՝ 47 անձ (31%-ը) և Ճգնաժամի թույլ, մեղմ դրսևորումներով կամ Նախաճգնաժամային ենթափուլ՝ 51 անձ (34%):

III գլխի 2-րդ ենթագլխում ներկայացված են «Բուն ճգնաժամի ենթափուլում գտնվող կամ ճգնաժամի սուր և միջին ընթացքով հետազոտվողների հետազոտության ընթացքը և արդյունքները»: Ըստ «Ես-կոնցեպցիայի հարցարանի», մեծամասնության **Ֆիզիկական Ես**-ի կոգնիտիվ հատվածը կայուն, հստակ է, հուզական-վերաբերմունքայինը՝ դրական: Ընդգծված է **Մասնագիտական Ես**-ի Իդեալական հատվածը, որը մեծամասնության մոտ հակասում է

Իրականին կամ նույնությամբ կրկնում այն, ինչը նույնպես Մասնագիտական Ես-ի բացասական հուզական վերաբերմունքի (ցածր Մասնագիտական ինքնագնահատական) ցուցիչ է: **Ծնողական Ես**-ի հատվածում տղամարդկանց Ծնողական Ես-ի Իրական և Իդեալական կողմերն իրար չեն հակասում, հուզականը դրական է (բարձր Ծնողական ինքնագնահատական), մինչդեռ կանանց դեպքում առկա է հակասականություն և բացասական հուզական վերաբերմունք (ցածր Ծնողական ինքնագնահատական):

Ըստ **Մ. Ռոզենբերգի ինքնահարգանքի հարցարանի,** Բուն ճգնաժամի /ճգնաժամի սուր և միջին ընթացքով/ 52 անձից ցածր ինքնահարգանք ունեն 22 անձ (42%), անկայուն ցածր՝ 26-ը (50%), հիմնականում կայուն՝ 3-ը (6%), իսկ բարձր ադեկվատ՝ 1 անձ (2%): Այս խմբում ինքնահարգանքի խնդիրներ կան, ծայրահեղ ցածր, ինքնանվաստացման հարող տվյալներ են գրանցվել, որպիսիք չկան այլ ենթախմբերում, որպիսիք ընդհանրապես շատ չեն հանդիպում, ընդ որում, մեծամասնություն են չամուսնացած կանայք: Փոքրաթիվ են «հիմնականում կայուն» և «բարձր» ինքնահարգանքի դեպքերը (52-ից 4-ի մոտ՝ 7,6%):



Գծապատկեր 1. **Ճգնաժամի սուր և միջին դրսևորումներով կամ բուն ճգնաժամի փուլում գտնվող հետազոտվողների տվյալներն ըստ Մ. Ռոզենբերգի ինքնահարգանքի հարցարանի n=52**

Ըստ «Ինքնագնահատականի էքսպրես/վերբալ հետազոտման մեթոդիկայի» (Ն. Պ. Ֆետիսկին, Վ. Վ. Կոզլով, Գ. Մ. Մանոյլով), բուն ճգնաժամի ենթափուլում գտնվող 52-ից ցածր ինքնագնահատական ունեն 46-ը՝ 88%, միջին՝ 5-ը (10%), բարձր՝ 1-ը (2%):

Գ. Ն. Կազանցևայի «Ընդհանուր ինքնագնահատականի մեթոդիկայից» ստացված տվյալները մոտ են նախորդ արդյունքներին: Բուն ճգնաժամի ենթափուլում գտնվող 52-ից ցածր ինքնագնահատական ունեն 48-ը (92%) միջին 4 անձ ՝(8%), իսկ բարձր՝ 0:

Գծապատկեր 2. Բուն ճգնաժամի փուլում գտնվող հետազոտվողների տվյալներն ըստ «Ընդհանուր ինքնագնահատականի ուսումնասիրման մեթոդիկայի», n=52

III գլխի 3-րդ ենթագլխում **«Նախաճգնաժամային ենթափուլում գտնվող անձանց հետազոտության արդյունքներն»** են ներկայացված: Ըստ «Ես-կոնցեպցիայի հարցարանի»,

ի տարբերություն բուն ճգնաժամի փուլի, մեծամասնությունը **ֆիզիկական Ես-ն** ավելի է կարևորում, կոգնիտիվ և հուզական մասերը համահունչ են, **Մասնագիտական, Ծնողական** և **Ամուսնու/Կնոջ** Ես-երը դրական են, կոգնիտիվ մասը՝ արտահայտված: 51-ից 49-ը **Անցյալ Ես**-ից **Ներկա Ես**-ն ավելի լավն են ընկալում, 100%-ի **Ապագա Ես**-ը՝ լավատեսական:

Ըստ Մ. Ռոզենբերգի ինքնահարգանքի հարցարանի տվյալների, այս փուլի 51 անձանցից ցածր ինքնահարգանք ունեն ընդամենը 2-ը (4%), անկայուն ցածր՝ 5-ը (մոտ 10%), հիմնականում կայուն՝ 26-ը (51%), իսկ բարձր ադեկվատ՝ 18 անձ (35%):



Գծապատկեր 3. Նախաճգնաժամային փուլի հետազոտվողների տվյալներն ըստ Մ. Ռոզենբերգի ինքնահարգանքի հարցարանի, n=51

Ըստ **«Ինքնագնահատականի էքսպրես մեթոդիկայի»,** Նախաճգնաժամային փուլում 51-ից ցածր ինքնագնահատական ունեն 6-ը՝ (12%,), միջին՝ 25-ը՝ (49%), բարձր՝ 20-ը (39%): Ըստ **«Գ. Ն. Կազանցեվայի ընդհանուր ինքնագնահատականի»** մեթոդիկայի ևս, այս փուլի գերակա մեծամասնության ինքնագնահատականը միջին և բարձր է, ինչը նորմալ, լավ հոգեվիճակի մասին է վկայում. միջին՝ 26 (51%), բարձր՝ 20 (39%), ցածր՝ 5 (10%):



Գծապատկեր 4. Նախաճգնաժամային փուլում գտնվող կամ ճգնաժամի թույլ, մեղմ դրսևորումներով հետազոտվողների ինքնագնահատականը ըստ Գ.Ն.Կազանցևայի, n=51

III գլխի 4-րդ ենթագլխում ներկայացված են «Հետճգնաժամային ենթափուլում գտնվող անձանց հետազոտության արդյունքները» (47 անձ): **ֆիզիկական Ես**-ի երկու՝ **դրական** վերաբերմունք և **անտարբերություն** դրսևորողների խումբ է առանձնանում: Ի տարբերություն Բուն ճգնաժամի փուլի, **Մասնագիտական, Ամուսնու/Կնոջ և Ծնողական Ես**-երի իդեալական և իրական կողմերը մոտ են, **Ներկա, Անցյալ** և **Ապագա Ես**-երի կոգնիտիվ հատվածն իրատեսական է, կոնկրետ, **Ներկա Ես-ը՝** հստակ: Կրկին ավելի դրական հուզական բովանդակություն է վերագրվել Անցյալ Ես-ին, Սակայն Ներկա Ես-ը ևս դրական վերաբերմունք է ստանում, միտում կա այն ընդունելու: Արդյունքները մոտ են Նախաճգնաժամային փուլի տվյալներին. չկան ինքնահարգանքի, ինքնագնահատականի խնդիրներ (միջին, բարձր

տվյալներն են շատ), ինչը խոսում է նորմալ, բարեհարմար հեգեվիճակի մասին:

Ըստ **Մ. Ռոզենբերգի ինքնահարգանքի հարցարանի,** 47 անձից շատ ցածր ինքնահարգանք է գրանցվել 6-ի (12,7%) մոտ, անկայուն՝ 5-ի (10,6%), հիմնականում կայուն՝ 20-ի (42,5%), իսկ բարձր, ադեկվատ՝ 16-ի (34%):



Գծապատկեր 5. Հետճգնաժամային ենթափուլում ինքնահարգանքի տվյալներն ըստ Ռոզենբերգի հարցարանի n=51

Ըստ «Ինքնագնահատականի էքսպրես ախտորոշման մեթոդիկայի», 47-ից ցածր ինքնագնահատական ունեն 3-ը (6,4%), միջին՝ 26-ը (55.3%), բարձր՝ 18-ը (38.3%):

Ըստ **«Ընդհանուր ինքնագնահատականի մեթոդիկայի»** (Գ. Ն. Կազանցևա), ցածր ինքնագնահատական ունեն 4-ը՝ (8,5%), միջին՝ 23-ը (49%), բարձր՝ 20-ը (42,5%):



Գծապատկեր 6. Հետճգնաժամային փուլում Ընդհանուր ինքնագնահատականը (Գ. Ն. Կազանցևա)

Երրորդ գլխի 5-րդ ենթագլխում ներկայացված են ոչ միայն Թեննեսիի համալսարանի «Ես-կոնցեպցիայի սանդղակ» մեթոդիկայից ստացված արդյունքները, այլ նաև դրանց համադրությունը ներկայացված այլ տվյալների հետ: Վերլուծվել են մեթոդիկայի տարբեր սանդղակների տվյալները, ապա դրանց ընտրական միջին ցուցանիշները:

Աղյուսակ 1. Թեննեսիի «Ես-կոնցեպցիայի սանդղակ» սանդղակների միջինացված ցուցանիշները հետազոտական 3 ենթախմբերում

Թեննեսիի Ես-կոնցեպցիայի սանդղակից ստացված տվյալներ									
Ես- կոնցեպցիա-յի սանդղակներ	Ֆիզիկա-կան Ես	Բարոյա-կան Ես	Անձնային Ես /Ներ-հայեցողական Ս. Ա/	Ընտա-նեկան	Սոցիա-ական Ես	Ակադե-միական Ես	Ընդհա-նուր	Ինքնություն կամ նույնականություն	Գոհունակություն, բավարարվածություն
Նախաճգնաժամ-ային	52.5	49.5	45.67	42.67	40.5	39.16	43.3	46.33	44.17
Բուն ճգնաժամի	41.17	41.61	33.78	38.22	39.78	43.78	36.83	37.06	35.67
Հետճգնա-ժամային	48.89	49.27	44.53	44.38	44.55	45.97	45.71	45	45.97

Բուն ճգնաժամի փուլում, ի տարբերություն այլ փուլերի, Ընդհանուր, Ինքնություն և Գոհունակություն սանդղակների ընտրական միջին ցուցանիշների նորմայից ցածր լինելը տատանվող կամ բացասական ինքնագնահատականի ցուցիչ է: Բուն ճգնաժամի փուլում

նորմայից ցածր են նաև **Անձնային, Ընտանեկան, Սոցիալական Ես**-երի ցուցանիշները, նորմայի սահմաններում են Ֆիզիկական, Բարոյական և Ակադեմիական Ես-երը, և քանի որ Ընդհանուր, Անձնային, Ինքնություն, Գոհունակություն սանդղակները ևս նորմայից ցածր են, սա նշանակում է, որ այս ենթափուլի ցածր ինքնագնահատականի տվյալներն ուղղակիորեն կապված չեն վերոնշյալ Ֆիզիկական, Բարոյական և Ակադեմիական Ես-երի հետ, այսինքն, դրանց դրական բնույթն այս հոգեվիճակում գտնվող անձի համար առաջնահերթ, մեծ կարևորություն չունի: Սակայն Մասնագիտական Ես-ի այս սանդղակի տվյալները հակասում են մեր հեղինակային հարցարանով ստացված տվյալներին, ինչը մեր կարծիքով կապված է նրա հետ, որ այստեղ Ակադեմիական Ես-ի հարցերը մաթեմատիկայի ոլորտից են, այսինքն, հումանիտար մասնագիտություններով անձանց տվյալներն օբյեկտիվ չեն կարող վերլուծվել: Ոչ մի փուլում որևէ սանդղակում բարձր տվյալներ չեն ստացվել, ինչը կարող է նշանակել, որ ճգնաժամի բոլոր փուլերում կամ թույլից մինչև վառ արտահայտված սրության դեպքերում անձի Ես-կոնցեպցիան զգայուն է դառնում: Տվյալներից ամենաբարձրը Նախաճգնաժամա–յինի Ֆիզիկական Ես-ի տվյալն է, միաժամանակ այս փուլում Ակադեմիական Ես-ը նորմայից ցածր է, ինչը նշանակում է, որ ընդհանուր ինքնագնահատականի առումով այստեղ թերևս ավելի կարևոր նշանակություն ունի դեռահասության համար ակտուալ ֆիզիկական Ես-ը:

Պիրսոնի գծային համահարաբերակցության մեթոդով Թեննեսիի «Ես-կոնցեպցիայի սանդղակի» տվյալները վերլուծության ենք ենթարկել թե՛ մեթոդիկայի սանդղակ–ների միջև, թե՛ այլ մեթոդիկաների տվյալների միջև կապերի վերհանման նպատակով, որոնցից կներկա-յացնենք միայն նշանակալները: Վերլուծության արդյունքում «Թեննեսիի Ես-կոնցեպցիայի սանդղակի» Ինքնության և Ռոզենբերգի ինքնահարգանքի, Ինքնագնահատականի Էքսպրես, Կազանցևայի ինքնագնահատականի մեթոդիկաների ցուցանիշների միջև գրանցվել են հա-վաստի դրական կապեր նախաճգնաժամային ենթափուլում (համապատասխանաբար՝ $r=0.362^{**}$, $r=0.415^{**}$, $r=0.360^{**}$, երբ $p=0.01$), մինչդեռ Բուն և Հետճգնաժամային ենթափուլե-րում այս կապերի հավաստիության ցուցիչները ցածր են: Թեննեսիի Գոհունակություն սանդ-ղակի և Ռոզենբերգի մեթոդիկայի տվյալների միջև նախաճգնաժամային ($r=0.343^{*}$, երբ $p=0.05$) և հետճգնաժամային փուլերում ($r=0.342^{*}$, երբ $p=0.05$) առկա են նշանակալի, հավաս-տի կապեր, իսկ Բուն ճգնաժամի փուլում հավաստիու–թյան ցուցիչները ցածր են: Նման կա-պեր առկա են նաև Ինքնագնահատականի վերբալ և Կազանցևայի մեթոդիկաների դեպքում (նախաճգն.՝ $r=-0.390^{**}$, $r=0.358^{**}$, երբ $p=0.01$, հետճգն.՝ $r=-0.345^{*}$, երբ $p=0.05$ և $r= 0.340^{*}$ երբ $p=0.05$), իսկ Բուն ճգնաժամի ենթափուլում այս կապերի հավաստիության ցուցիչներն համե-մատաբար ավելի ցածր են (**«-»** նշանը ոչ թե հակադարձ համեմատական կապ է ցույց տալիս, այլ ուղիղ՝ պայմանավորված Էքսպրես մեթոդիկայի արդյունքների վերլուծության բնույթով. ցածր միավորներն են բարձր ինքնագնահատականի ցուցիչ, բարձրերը՝ ցածր): Ս**ա կարող է նշանակել կամ ինքնագնահատականի անկայունություն, կամ, որ Բուն ճգնաժամի փուլում**

դրական ինքնագնահատումները՝ ինքնահարգանքի փաստական հիմքերը, բավարար չեն կամ դրանք յուրահատուկ բնույթ պիտի կրեն սեփական Ես-ից գոհության համար:

Նախաճգնաժամային փուլում **Ֆիզիկական Ես** սանդղակի և **Ռոզենբերգի ինքնահարգանքի** մեթոդիկայի տվյալների միջև առկա է նշանակալի կապ (r=0,344*, երբ p=0.05), իսկ Բուն ճգնաժամի և Հետճգնաժամային փուլերում՝ ոչ (r=0.091), Նախաճգնաժամային (r=-0.417**, երբ p=0.01) և Հետճգնաժամային փուլերում **Ֆիզիկական Ես**-ի և **Ինքնագնահատականի Էքսպրես** մեթոդիկայից ստացված տվյալների միջև ևս առկա է ուժեղ կապ (r=-0.417**, երբ p=0.01) (r=-0.-291*, երբ p=0.05), իսկ Բուն ճգնաժամի փուլում հավաստիության ցուցիչները ցածր են: **Կազանցևայի մեթոդիկայի** դեպքում ևս **Ֆիզիկական Ես** սանդղակի դեպքում նշանակալի կապ է առկա նախաճգնաժամային փուլում (r=0.423**, երբ p=0.01), ավելի թույլ, բայց նշանակալի կապ կա նաև Բուն ճգնաժամի փուլում (r=0.285*, երբ p=0.05): Սա **թերևս նշանակում է, որ անձի Ես-կոնցեպցիայի Իդեալական հատվածում Նախաճգնաժամային փուլում դեռ ակտուալ է դեռահասության համար գերկարևոր Ֆիզիկական Ես-ը, որը կրկին նորմայի շրջանակներում ակտուալանում է Հետճգնաժամային փուլում, մինչդեռ Բուն ճգնաժամի փուլում դեզակտուալանում է՝ ընդհանուր ինքնագնահատականի «լոկոմոտիվի» դերը զիջելով այլ բաղադրիչների. այս փուլում դրական Ֆիզիկական Ես-ը բավարար չի այլևս բարձր ինքնահարգանք ունենալու համար:** Այստեղ Կազանցևայի մեթոդիկայի դեպքում առկա է նշանակալի կապ, որը թերևս կարող ենք բացատրել նրանով, որ չնայած նշվածին, **այնուամենայնիվ Ֆիզիկական Ես-ը կարևոր նշանակություն ունի ընդհանուր դրական ինքնընկալման հարցում:**

Ռոզենբերգի ինքնահարգանքի մեթոդիկայի տվյալների և Ակադեմիական Ես-ի միջև կապերը թույլ են, ոչ նշանակալի բոլոր փուլերում: Ինքնագնահատականի վերբալ կամ էքսպրես հետազոտության մեթոդիկայի տվյալների և **Ակադեմիական Ե**-ի միջև առկա է ուժեղ դրական կապ (չնայած **«-» նշանին)** Նախաճգնաժամային և Հետճգնաժամային ենթա–փուլերի տվյալների միջև (համապատասխանաբար՝ r=-0.290*, երբ p=0.05, և r=-326*, երբ p=0.05): Կազանցևայի ինքնագնահատականի մեթոդիկայի դեպքում Ակադեմիական Ես-ի հետ նշանակալի, ուժեղ կապեր են առկա Նախաճգնաժամային (r=0.415**, երբ p=0.05), ավելի ցածր հավաստության ցուցիչներով կապեր՝ նաև Բուն ճգնաժամի փուլերում (r=0.335*, երբ p=0.05), ինչը **թերևս կրկին կարելի է բացատրել նրանով, որ Ակադեմիական Ես-ի հարցերն ավելի շատ մաթեմատիկական են, ինչը չի տալիս Մասնագիտական (Ակադեմիական) Ես-ի լիարժեք, ամբողջական բնութագիր. մաթեմատիկական գիտելիքն այս տարիքում դրական ինքնագնահատականի բավարար հիմք չէ:** Կազանցևայի մեթոդիկայի և **Սոցիալական Ես**-ի միջև ևս առկա է նշանակալի դրական կապ (r=0.338*, երբ p=0.05): Ինքնագնահատականի էքսպրես հետազոտության մեթոդիկայի և **Սոցիալական Ես** սանդ-

ղակի միջև արդեն Բուն ճգնաժամի փուլում է առկա հակադարձ (չնայած «+» նշանին) համեմատական նշանակալի կապ (r=0.279*, երբ p=0.05). այս փուլում Սոցիալական Ես-ի բարձր արտահայտվածությունը հարաբերակցվում է ցածր ինքնագնահատականի հետ (ըստ մեթոդիկայի, ցածր ինքնագնահատականը բարձր նիշերով է), և ընդհակառակը: **Սոցիալական Ես սանդղակի հարցերից կարող ենք ե**նթադրել, որ այս կապերը նաև Հայելային Ես-ի ցուցիչ են, որոնց առկայությունը **վկայում է, որ Բուն ճգնաժամի փուլում ինքնագնահատականի համար նվազում է Սոցիալական (Հայելային) ես-ի նշանակությունը, այսինքն, Ես-կոնցեպցիայի, դրա հուզական բաղադրիչի՝ ինքնագնահատականի համար դոմինանտ, «լոկոմոտիվ» է դառնում Ներհայեցողական Ես-ը:**

Նշանակալի կապերը վերլուծվել են նաև Թեննեսիի «Ես-կոնցեպցիայի» հարցարանի սանդղակների միջև: Առկա են նշանակալի դրական կապեր **Ինքնության** և **Ակադեմիական Ես-ի** միջև Նախաճգնաժամային, Բուն ճգնաժամի փուլերում (Նախ.՝ r=0.344*, Բուն ճգն. r=0.317*, երբ p=0.05), նույն կերպ՝ **Բավարարվածություն** և **Ակադեմիական** Ես սանդղակների (Նախ.՝ r=0.502**, երբ p=0.01, Բուն՝ r=0.322*, երբ p=0.05): Հետճգնաժամային փուլում նույն կապերը թույլ են: Այսինքն, Բուն և Նախաճգնաժամային փուլերում **Ակադեմիական Եսը Ես-կոնցեպցիայի Ինքնության, Բավարարվածության համար կարևոր դեր ունի:**

Ընտանեկան և **Սոցիալական Ես-**երի միջև Բուն /r=0.361*, երբ p=0.05/ և Հետճգնաժամային /r=407**, երբ p=0.05/ փուլերում առկա է նշանակալի կապ, Նախաճգնաժամայինում նույն կապը թույլ է. **թերևս պայմանավորված է նրանով, որ Ես-կոնցեպցիայի Իդեալական հատվածում Նախաճգնաժամային փուլում** դրանք ակտուալ չեն, ակտուալանում են **Բուն ճգնաժամի ընթացքում, ավելին, հենց դրանք են ըստ էության ստանձնում այն տարիքային փուլի համար իդեալական Ես-ի՝ «լոկոմոտիվի» դերը:**

III գլխի 6-րդ՝ «25-33 տարեկանի ճգնաժամի ընթացքում անձի կողմից սեփական ես-ի ընկալման հետազոտություն գիտափորձի մեթոդով» ենթագլխում ներկայացվել են Մ. Էրիկսոնի և Ռ. Ասաջոլիի մոտեցումներով անձի Ես-կոնցեպցիայի վիզուալիզացիայի գիտափորձի արդյունքները. Ես-ի վիզուալիզացիան հաճախ դժվար կամ անհնարին է սուր ճգնաժամի դեպքում, բուն ճգնաժամի ընթացքում, քանի որ Ես-կոնցեպցիայի վերակառուցման շրջանում դրա անորոշությունը, սթրեսայնությունը, հուզական նշանակությունը ստիպում են բազմաթիվ անձանց ենթագիտակցորեն խուսափել սեփական Ես-ը այդ վիճակներում պատկերացնելուց:

III գլխի 7-րդ ենթագլխում 3 դեպքերով ներկայացված է «Անձի կողմից սեփական Ես-ի ընկալման առանձնահատկությունների ուսումնասիրություն դեպքերի վերլուծությամբ»:

III գլխի 8-րդ՝ «Ես-կոնցեպցիայի կառուցվածքի համակարգային մոդել» ենթագլխում իրականացված հետազոտությունների, տարբեր հեղինակների առաջադրած, փաստական հիմնավորմամբ և տրամաբանության «Հասկացության ծավալի բաժանման» կանոնների հիման վրա առաջադրվել է Ես-կոնցեպցիայի նոր, ամբողջական, համակարգային մոդել:

Ես-կոնցեպցիայի կառուցվածքի համակարգային մոդել



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքների հոգեբանական վերլուծությունները հանգեցրել են հետևյալ եզրակացություններին:

1. 25-33 տարեկանի ճգնաժամի ընթացքում Ես-կոնցեպցիայի առանձնահատկությունների վերաբերյալ բազմաթիվ հեղինակների անդրադարձերը, տեսությունները, հայեցակարգերը հակասական, մակերեսային բնույթ են կրում, այնուամենայնիվ, դրանց վերլուծությունից պարզ է դառնում, որ այս շրջանում Ես-կոնցեպցիան փոփոխություններ է կրում, սակայն անհրաժեշտ է վերհանել, թե կոնկրետ որ բաղադրիչները և ինչպես են փոփոխվում:

2. 25-33 տարեկանի ճգնաժամը դրսևորվում է տարբեր սրության ախտանշաններով, որոնց հիման վրա կարելի է առանձնացնել ճգնաժամի դրսևորման Նախաճգնաժամային կամ թույլ, թեթև դրսևորումներով, Բուն ճգնաժամի կամ ճգնաժամի սուր դրսևորումներով և Հետճգնաժամային ենթափուլեր:

3. Անձի Ես-կոնցեպցիայի բաղադրիչների միջև գործում է դինամիկ հիերարխիա. կյանքի տարբեր փուլերում դրանց դոմինանտության չափանիշները փոխվում են, դրանցից մեկը սկսում է կատարել Ես-կոնցեպցիայի «Լոկոմոտիվի» ՝ ուղղորդող, շարժիչ ուժի, կենտրոնի ֆունկցիան: Այս շրջանում Ես-կոնցեպցիայում տեղի են ունենում տեղաշարժեր. նախկինում ակտուալ, կարևոր և առանցքային նշանակություն ունեցող Իդեալական Ես-ի բաղադրիչը դեզակտուալանում է, ակտուալանում և ընդհանուր Ես-կոնցեպցիայի լոկոմոտիվի՝ ուղղորդող, շարժող հիմնական կենտրոնի դեր են ստանձնում Սոցիալական ակտիվության սուբյեկտի Ես-

ի այս տարիքի համար առավել կարևոր բնութագրեր ունեցող բաղադրիչները՝ Ծնողական, Մասնագիտական, Ամուսնու/Կնոջ, Ընտանեկան: Ճգնաժամի երեք փուլերում կամ թույլից մինչև վառ արտահայտված սրության դեպքերում անձի Ես-կոնցեպցիան զգայուն է դառնում:

4. **ա/** Նախաճգնաժամային ենթափուլում Ընտանեկան Ես և Սոցիալական Ես բաղադրիչները դեռ ակտուալ չեն. ակտուալ են Ես-կոնցեպցիայի Ֆիզիկական Ես, Բարոյական Ես բաղադրիչները, որոնց դրական կամ բացասական բնույթը տարածվում, ազդում է Ես-կոնցեպցիայի կոգնիտիվ և հուզական գնահատողական բաղադրիչների /ինքնահարգանք, ինքնագնահատական/ դրական կամ բացասական երանգավորման վրա:

բ/ Բուն ճգնաժամի ենթափուլում կամ ճգնաժամի սուր և միջին սրության դեպքում Ես-կոնցեպցիայի նոր ակտուալացած՝ լոկոմոտիվային բաղադրիչների Իդեալական և Իրական կողմերի միջև բախումն է հենց հանգեցնում ճգնաժամային ապրումների ու ախտանշանների վառ, սուր դրսևորումների: Ես-կոնցեպցիայի դեզակտուալացած բաղադրիչներն /Ֆիզիկական Ես/ այլևս չեն ազդում Ես-կոնցեպցիայի վրա, նոր ակտուալացած բաղադրիչների Իդեալական և Իրական կողմերի միջև բախումն է հանգեցնում Ես-կոնցեպցիայի կոգնիտիվ և հուզական գնահատողական բաղադրիչների /ինքնահարգանք, ինքնագնահատական/ բացասական, երբեմն՝ գերբացասական բնույթով /գերցածր ինքնահարգանք, ինքնագնահատական, ինքնանվաստացման դրսևորումներ և այլն/:

գ/ Բուն ճգնաժամի ենթափուլում Ներկա, Անցյալ և Ապագա Ես-երի, միջև, հատկապես Ներկա Ես-ի Իդեալական և Իրական բաղադրիչների միջև խորը հակասությունն ու կոնֆլիկտն են բուն ճգնաժամի ենթափուլում հանգեցնում ժամանակի ընթացքի արագացման սուբյեկտիվ ընկալման, Ներկա Ես-ի բացասական ընկալումների, հնարավոր են նույնիսկ սեփական Ես-ը վիզուալիզացնելու խնդիրներով դրսևորվող Ներկա Ես-ի իրական գծերի արտամղման դեպքեր: Բուն ճգնաժամի ենթափուլի ընթացքում հաճախ Ներկա Ես-ը բացասական, Ապագա Ես-ը հոռետեսական բնույթ են կրում, ինչն այդքան էլ բնորոշ չէ մյուս ենթափուլերին: Ըստ էության, այս երևույթը կարող է բնորոշ լինել ոչ միայն 25-33 տարեկանի, այլ ընդհանրապես անձի ճգնաժամային ապրումների հոգեվիճակին: Ճգնաժամի ընթացքում իջնում է Հայելային Ես-ի, մեծանում՝ Ներհայեցողական Ես-ի նշանակությունը:

դ/ Հետճգնաժամային փուլում, ի տարբերություն Բուն ճգնաժամի, **Մասնագիտական, Ծնողական Ամուսնու/Կնոջ Ես**-երի իդեալական և իրական կողմերը բավական մոտ են իրար, խորը հակասություն,բախում չկա: **Ներկա, անցյալ** և **ապագա Ես**-երի կոգնիտիվ հատվածն իրատեսական է. տարբեր են հատկապես Ներկա Ես-ի բնութագրումները, որ բավական կոնկրետ և հստակ են, հուզական-գնահատողական վերաբերմունքը՝ դրական, առկա է միտում Ես-Կոնցեպցիայի **Ներկա** հատվածն ընդունելու:

5. Անձի Ես-կոնցեպցիայի բաղադրիչները փոխկապակցված են միմյանց հետ, ծագում են մեկը մյուսից, ազդում միմյանց վրա, Ես-կոնցեպցիան ունի հստակ կառուցվածք, որը

կարելի է ներկայացնել որպես ամբողջական մի համակարգ, որում Ես-կոնցեպցիայի բաղադրիչները ներկայացվում են դասակարգված տարբեր բաժանման հիմքերով (ըստ իրականության հետ կապի, ըստ այս կամ այն ոլորտին առնչության և պատմամշակութային ազդեցության, ըստ ծագման աղբյուրի, ըստ ժամանակային գծի վրա տեղակայման, ըստ գոյության ցանկալիության, ըստ նույնականության առկայության կամ բացակայության, ըստ բաղադրիչների կոգնիտիվ կամ հուզական բնույթի և այլն):

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Առաքելյան Ս. Հ., Ես-կոնցեպցիայի ու դրա կառուցվածքի հիմնահարցը հոգեբանության մեջ, Հոգեբանությունը և կյանքը, Եր., «Զանգակ», 2011, N 3-4, (էջ 76-80)
2. Առաքելյան Ս. Հ., Ծնողական ներշնչանքների և անձի Ես-կոնցեպցիայի հետ աշխատանքի մեր փորձը, Գիտական տեղեկագիր, N 3-4 (28-29), Եր., 2016, (էջ 51-56)
3. Առաքելյան Ս. Հ., Անձի Ես-կոնցեպցիայի ձևավորումը, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Եր., ՀՊՄՀ, 2016, (էջ 121-126)
4. Առաքելյան Ս. Հ., Մասնագիտական Ես-ը որպես Ես-կոնցեպցիայի կարևոր բաղադրիչ, ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, Եր., «Անանիա Շիրակացի», 2017, N1 (24), (էջ 419-423)
5. Առաքելյան Ս. Հ., Զարգացման ճգնաժամերն ու հոգեախտաբանությունը /մասնավորապես՝ Ես-կոնցեպցիայի հոգեախտաբանությունը/, ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, Եր., «Անանիա Շիրակացի», 2017, N1 (24), (էջ 424-430)
6. Առաքելյան Ս. Հ., Դանիելյան Ս. Հ., Հայ և օտարազգի դպրոցականների շրջանում դեռահասության ճգնաժամի դրսևորման առանձնահատկությունների հետազոտություն զրույցի մեթոդով, Գիտական Արցախ, Եր., «Արցախ», 2023, N 4 (19), (էջ 139-147)
7. Аракелян С. О., Сенкевич Л. В., Базаркина И. Н., Совладающее поведение в юношеском возрасте как условие продуктивного переживания экзистенциального кризиса (социокультурный аспект) Социальная политика и социология, Москва, 2012, N 8, (стр.125-138)
8. Առաքելյան Ս. Հ., 25-33 տարեկանի ճգնաժամի հանգուցալուծման խնդիրը հոգեբանության մեջ, ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., «Մանկավարժ», 2013, 492 էջ, (էջ 236-239)
9. Առաքելյան Ս. Հ., Անձի Ես-կոնցեպցիայի բաղադրիչների առանձնահատկությունները 25-33 տարեկանի անձի զարգացման ճգնաժամի ընթացքում, Հոգեբանության արդի հիմնախնդիրները /Գիտ. աշխատութ. ժողովածու/, Եր., «Գ. Տաթևացի», 2016, (էջ 37-41)
10. Առաքելյան Ս. Հ., Ես-կոնցեպցիայի պրոբլեմների համակարգը Հոգեբանական հիմնախնդիրներ. բնութագրերը, դասակարգման և ախտորոշման սկզբունքները (Միջազգային գիտաժողովի նյութեր), Եր., «Լիմուշ», 2019, (էջ 256-261)

АРАКЕЛЯН СИРИНА ОГАНЕСОВНА

ОСОБЕННОСТИ Я-КОНЦЕПЦИИ ЛИЧНОСТИ В ТЕЧЕНИИ КРИЗИСА 25-33 ЛЕТ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 «Общая психология, теория и история психологии, психология личности». Защита диссертации состоится 25 февраля, 2026 г. в 12.00 ч., на заседании специализированного совета по психологии 064 КВОН Министерства ОНКС РА при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна (0010, г. Ереван, проспект Тиграна Меца, 17).

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В научной психологии проблема кризиса возраста 25-33 лет удостоилась внимания довольно поздно, хотя в различных областях с психологической и психиатрической точки зрения ей уделялось особое внимание как поворотному, уязвимому моменту, с точки зрения психологических проблем и психических заболеваний. Многие исследования носят теоретический характер, мало эмпирических. Проблема Я-концепции также важна. Несмотря на множественные исследования, выдвинутые теории, до сих пор идет полемика по поводу самого понятия, его компонентов и других, связанных понятий, как «я», самооценка, самоотношение, самоуважение. Как показывают некоторые исследования (Л. Божович, Е. Солдатова, С. Худоян и др.), во время кризисов развития происходят изменения в Я-концепции, однако, что именно происходит с различными ее компонентами практически не изучено. В связи с этим наше исследование актуально не только с теоретической, но и с прикладной точки зрения, поскольку позволяет сформировать более четкое представление об особенностях Я-концепции в период кризиса 25-33 лет, понять их важные, существенные черты, что очень важно для эффективности психологической помощи, консультирования и психотерапии.

Объект исследования - Я-концепция личности, переживающей кризис.

Предмет исследования - особенности Я-концепции личности в период кризиса 25-33 лет.

Цель исследования-выявление особенностей Я-концепции личности в период кризиса 25-33 лет.

Задачи исследования:

1. Изучить научные теории, подходы, связанные с кризисами, в частности с кризисом 25-33 лет, с Я-концепцией, с её структурой, компонентами, а также с ее особенностями в период кризисов, выявить связанные с этим вопросы и проблемы.

2. Исследовать проявления, характер и тяжесть течения кризиса 25-33 лет и, на основе этого, сгруппировать испытуемых по стадиям или особенностям течения кризиса.

3. Экспериментально изучить и выявить общие особенности проявления компонентов Я-концепции на разных подстадиях кризиса 25-33 лет или с разными особенностями ее течения.

4. На основе количественного, качественного и сравнительного анализа результатов экспериментального исследования определить- какие проявления компонентов Я-концепции у испытуемых со слабыми проявлениями кризиса или в Предкризисном этапе, с острыми проявлениями или в Кризисном этапе и в Посткризисном этапе.

5. На основе теоретического и экспериментального исследования Я-концепции сформировать новую, полную, системную модель структуры самосознания.

Гипотеза исследования: Предполагается, что между компонентами Я-концепции существует динамическая иерархия: на разных этапах жизни, на разных этапах кризиса меняются критерии их

доминирования, один из них начинает выполнять функцию «локомотива» общей Я-концепции, а во время кризиса 25-33 лет эту роль берут на себя родительское Я, профессиональное Я, супружеское Я, семейное Я и др. компоненты Я-концепции, в результате чего, в частности, проявляется следующее: • На Предкризисном этапе компоненты «Физическое Я», «Моральное Я» актуальны, их позитивный или негативный характер влияет на позитивную или негативную окраску когнитивных и эмоционально-оценочных компонентов Я-концепции (самооценка, самоуважение и т.д.).• На этапе самого кризиса столкновения, противоречия и конфликты между идеальной и реальной сторонами актуализированных компонентов Я-концепции, а также между настоящим, прошлым и будущим «Я», приводят к ярким, острым проявлениям кризисных переживаний и симптомов, к негативным проявлениям когнитивных и эмоционально-оценочных компонентов Я-концепции и негативному восприятию настоящего «Я».• На Посткризисном этапе идеальная и реальная стороны некоторых компонентов самосознания сближаются, и преодолеваются глубокие противоречия и конфликты.

Научная новизна исследования: • В исследовании выдвинута идея динамической иерархии компонентов структуры Я-концепции, на основе которой разработано новое понятие- «локомотив Я-концепции» (компонент, обладающий чрезвычайной направляющей силой и оказывающий положительное или отрицательное влияние на эмоциональные стороны Я-концепции /самооценка, самоотношение/). • В период кризиса 25-33 лет, ранее значимый, важный компонент идеального «Я» дезактуализируется, актуализируются компоненты «Я» с более важными для этого возраста характеристиками, которые становятся «локомотивным компонентом» Я-концепции. •Предлагается новое понятие- «Интроспективное Я» (в противопоставление и аналогию с «Зеркальным Я»). •На Предкризисном этапе компоненты «Физического Я» и «Морального Я» в Я-концепции играют роль локомотива. • На этапе самого кризиса конфликты между новыми «локомотивами» Я-концепции, а также между Настоящим «Я», Прошлым «Я» и Будущим «Я», и особенно между идеальным и реальным аспектами Настоящего «Я», приводят к обострению кризиса, к негативной природе когнитивных и эмоционально-оценочных компонентов Я-концепции (самоуважение, самооценка). •На этапе самого кризиса «Настоящее Я» часто негативное, а «Будущее Я» - пессимистичное. В результате негативного восприятия «Настоящего Я», возможно ее вытеснение, что проявляется даже проблемами ее визуализации • Значимость «Зеркального Я» уменьшается, а «Интроспективное Я» приобретает большее значение. •На посткризисном этапе отсутствуют глубокие противоречия между идеальным и реальным сторонами «Профессионального Я», «Родительского Я» и «Супружеского Я». Когнитивная часть «Настоящего Я», «Прошлого Я» и «Будущего Я» более реалистична. «Настоящее Я» становится конкретной и ясной, наблюдается тенденция к принятию «Настоящего Я». • Представлена новая системная модель структуры Я-концепции.

Теоретическая значимость исследования. Результаты исследования обогащают понимание Я-концепции личности, природы кризиса 25-33 лет, особенностей его проявления, демонстрируя особенности Я-концепции в целом, а также некоторых его компонентов, в частности, супружеского, родительского, профессионального Я.

Прикладное значение исследования - Результаты исследования могут быть использованы в областях психологического консультирования, психотерапии, личностного роста и развития, решения проблем, связанных с Я-концепцией личности в период 25-33 лет.

По теме диссертации опубликовано 10 статей.

SIRINA H. ARAKELYAN

SELF-CONCEPT PECULARITIES DURING THE 25-33 AGE CRISIS

Thesis submitted for the degree of candidate of psychological sciences in the specialty of 19.00.01 "General psychology, theory and history of psychology, psychology of personality".

The official (public) defense of the dissertation will take place on February 25, 2026, at 12:00, at a meeting of HESC 064 Degree-awarding Scientific Council of Ministry of ESCS, at the Kh. Abovyan Armenian state pedagogical university (17, Tigran Mets Avenue, Yerevan, 0010).

SUMMARY

The relevance of the research. In scientific psychology, the problem of the 25-33 age crisis received attention and was defined as a crisis relatively late, although in psychology and psychiatry it has been noticed as a turning point, a vulnerable moment for psychological problems and disorders. Many researches of 25-33 age crisis are theoretical: empirical researches are rare.

The issue of Self-concept is also important. Numerous studies, theories, and approaches have been put forward, but there is still considerable controversy regarding the Self-concept itself, its components, and other related concepts such as "self," self-esteem, self-respect, and self-worth etc. Numerous studies (L. Vygotsky, L. Bozhovich, E. Soldatova, S. Khudoyan, and others) show, that during developmental crises changes in the Self-concept occur. However, what exactly happens to various components of Self-concept during a crisis are still practically not studied. The study has a theoretical and applied perspective, as it allows us to form a clearer understanding of Self-concept peculiarities, important features during the age crisis of 25-33, which is important for the psychological assistance and psychotherapy.

The object of the research is the self-concept of a person in crisis.

The subject of the research are the peculiarities of self-concept during the 25-33 age crisis.

The purpose of the research is to reveal the self-concept peculiarities during the 25-33 age crisis.

The objectives of the research.

1. To study scientific theories and approaches related to crises, in particular the 25-33 age crisis, the self-concept, its structure, components, and its peculiarities during this crisis, to identify related issues and problems.

2. To examine the nature, the forms and severity of 25-33 age crisis manifestations and, based on this, to group subjects by stages or characteristics of the crisis.

3. To conduct a research and identify common characteristics of the manifestation of Self-concept components at different substages of the 25-33 age crisis or with different characteristics of the crisis.

4. Based on quantitative, qualitative, and comparative analysis of the results of the experimental research, reveal the peculiarities of the self-concept components in subjects with mild crisis manifestations (pre-crisis stage), acute crisis manifestations (crisis stage), and post-crisis stage.

5. Based on theoretical and experimental research of the Self-concept, formulate a new, comprehensive, integral, all-embracing systemic model of the structure of Self-concept.

The hypothesis of the research. It is supposed that there is a dynamic hierarchy between the components of the self-concept: at different stages of life, at different stages of the crisis, the criteria for their dominance change, one of the components begins to perform the function of the "locomotive" (the guiding, driving force, the center) of the overall Self-concept, and during the 25-33 age crisis the role of the Self-

concept locomotive is taken on by the parental self, professional/academic self, marital self, family self and other social components of the self-concept, as a result of which, in particular, the following is manifested:

• At the Pre-Crisis Stage, the components "Physical Self" and "Moral Self" remain relevant and direct the overall Self-concept, their positive or negative character influences the positive or negative coloring of the cognitive and emotional-evaluative components of the Self-concept (self-esteem etc.).

• During the acute crisis or Crisis stage contradictions and conflicts between the ideal and real aspects of the actualized components of the Self-concept, as well as between the Present, Past, and Future selves, lead to acute manifestations of crisis experiences and crisis symptoms, negative manifestations of the cognitive and emotional-evaluative components of the Self-concept, and a negative perception of the Present self.

• During the Post-Crisis Phase, the ideal and real aspects of certain components of self-awareness converge, and profound contradictions and conflicts are overcome.

Scientific novelty of the research: • The study puts forward the idea of a dynamic hierarchy of the components of the Self-concept structure, based on which a new concept has been developed - "the self-concept locomotive" (a component which has extraordinary guiding force and has a positive or negative impact on the emotional aspects of the Self-concept /self-esteem, self-attitude/). •During the crisis of 25-33 years, the previously significant, important component of the "ideal self" is de-actualized, and the components of the "Self" with more important characteristics for this age are actualized, which begin to play the role of the "locomotive component" • A new concept is proposed - "Introspective Self" (in contrast to and analogy with the "Looking-Glass Self"). • At the Pre-crisis stage, the "Physical Self" and "Moral Self" still play the role of a locomotive in the Self-concept. • At the stage of the crisis or in acute crisis, conflicts between the new actualized "locomotives" of the self-concept, as well as between the "Present Self", the "Past self" and the "Future Self", and also between the ideal and real aspects of the "Present Self", lead to crisis aggravation. • In acute crisis the "Present Self" is often negative, and the "Future Self" is pessimistic. The negative perception of the "Present Self" sometimes leads to its repression, which is even manifested by problems with "Present Self" visualization. • The significance of the "Looking-Glass Self" decreases, and the "Introspective Self" acquires greater significance. • At the post-crisis stage, there are no deep contradictions between the ideal and real sides of the "Professional Self", "Parental Self" and "Marital Self". The cognitive part of the "Present Self", "Past Self" and "Future Self" is more realistic. The "Present Self" becomes concrete and clear, and there is a tendency to accept the "Present Self". • A new systemic model of the structure of Self-concept is presented.

Theoretical significance of the research. The results of the study enrich our understanding of the Self-concept, the nature of the 25-33 age crisis, and the characteristics of its manifestations. They demonstrate the Self-concept peculiarities of the whole self-concept and some of its components, particularly the marital, parental, and professional selves.

Practical significance of the research. The results of the study can be used in psychological counseling, psychotherapy, personal growth and development, and addressing issues related to the Self-concept of individuals in the 25-33 age group.

10 articles are published on the topic of the dissertation.